Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական և փաստական հիմքերը և հիմնավորումները, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ, 109-րդ, 179-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 362-րդ հոդվածներով և 27.2-րդ գլխով՝

ՎՃՌԵՑ

1. «ԳՈՎԹԵՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ «ՆԱԲԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊ ընկերության՝ պատասխանողի կարիքների համար հայտարարված «ԵՔ-ԲՄԽԾՁԲ-25/01» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 23.12.2024 թվականի ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 9-րդ արձանագրության 2.1.2 կետով կայացրած «ԳՈՎԹԵՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը անբավարար գնահատելու մասին որոշումը և «ՆԱԲԻՔՍ ՍՈՖԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն ընտրված մասնակից ճանաչելու որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարել:

1.1 Անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար հայտարարված ծրագրային ապահովման հետ կապված խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով ԵՔ-ԲՄԽԾՁԲ-25/01 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 23.12.2024թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 9-րդ արձանագրության 2.1.2 կետով կայացրած «ԳՈՎԹԵՔ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու մասին որոշումը:

1.2 Անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար հայտարարված ծրագրային ապահովման հետ կապված խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով ԵՔ-ԲՄԽԾՁԲ-25/01 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 23.12.2024թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 9-րդ արձանագրությամբ կայացրած որոշումը՝ «ՆԱԲԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

2. Երևանի քաղաքապետարանից հօգուտ «ԳՈՎԹԵՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բռնագանձել ընդհանուր 300,000 ՀՀ դրամ՝ որպես առաջին ատյանի դատարան ներկայացված հայցադիմումի և վերաքննիչ քաղաքացիական դատարան ներկայացված վերաքննիչ բողոքների համար վճարման ենթակա պետական տուրքի գումար:

3. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

5. Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր՝ **Մալվինա Հարությունյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE7C-215C-41AE-A5C2 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am